ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 72-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Անդրանիկ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Անդրանիկ Մանուկյանը 2022 թվականի փետրվարի 2-ին դիմել է Սահմանա-դրական դատարան՝ խնդրելով.

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն՝ այնքանով, որքանով իր ոչ հստակ ձևակերպման պատճառով չի ստեղծում պատշաճ նախադրյալներ՝ իրավական որոշակիությանը համապատասխանող օրենքի հիման վրա դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և, ըստ այդմ, դատախազի իրավունքների սահմանափակման համաչափությունն ապահո-վելու համար, ճանաչել ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակա-սող ու անվավեր»:

2. Ներկայացված դիմումով դիմողը պնդում է, որ վիճարկվող նորմով նախա-տեսված և դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները սահմանող՝ «դատա-խազության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող վարքագիծ» օրենսդրական եզրույթը անորոշ է, և պարզ չէ, թե պրակտիկայում ինչպես է մեկնաբանվում և կիրառվում այն:

Ըստ այդմ՝ դիմողը բարձրացնում է հետևյալ հարցադրումը. «Արդյոք «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված և դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները սահմանող՝ «դատախազության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող վարքագիծ» օրենսդրական եզրույթը բավարար չափով հստակ ու կանխատեսելի են նախատեսում այն, թե որն է դատախազի կողմից կատարված այն արարքը, որն անհարիր է դատախազության բարձր հեղինակությանը կամ վարկաբեկում է այն»:

Ըստ դիմողի՝ «դատախազության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող վարքագիծ» օրենսդրական եզրույթից հետևում է, որ այն չի համապատասխանում Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության և հատկապես իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ հստակ և կանխատեսելիորեն չի սահմանում, թե իր ո՞ր արարքն է, որ կարող է գնահատվել իբրև դատախազության բարձր հեղինակությանն անհարիր կամ դատախազության բարձր հեղինակությունը վարկաբեկող: Մասնավորապես, դիմողի գնահատմամբ՝ դատախազի համար պարզ չէ, թե արարքը որպես կարգապահական խախտում գնահատելու համար արդյո՞ք բավարար է արձանագրել, որ դատախազը նշված արարքով դուրս է եկել համապատասխան իրավական ակտով անմիջականորեն իրեն վերապահված լիազորությունների շրջանակից, թե նաև պարտադիր է, որ դատախազի համապատասխան արարքի արդյունքում խախտվի հանրային կամ մասնավոր շահն ապահովող որևէ իրավունք, որի դեպքում միայն կարող է գնահատվել, որ դատախազի արարքը ոչ հարիր է դատախազության բարձր հեղինակությանը կամ վարկաբեկում է այն:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ

առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը նախատեսում է դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները, որի 1-ին մասի 1-ին կետի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթի համաձայն՝ դատախազը պարտավոր է ցանկացած պայմաններում ու իրավիճակում իր գործունեությամբ, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով զերծ մնալ դատախազության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, դատախազության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ դատախազության անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց, այդ թվում՝ հօգուտ որևէ անձի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անձնական երաշխավորություն տալուց:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ «Դատախազի վարքագծի կանոնները» վերտառությամբ գլխի, մասնավորապես՝ 72, 73 և 74-րդ հոդվածների համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված օրենքի 72-րդ հոդվածը նախատեսում է դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները, իսկ 73 և 74-րդ հոդվածներով կանոնակարգվում են դատախազի վարքագծի կանոնները համապատասխանաբար պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում:

Դիմողի կողմից բարձրացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված «դատախազության բարձր հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող վարքագիծ» եզրույթի՝ Սահ-

մանադրությանը համապատասխանության հարցն այն հիմնավորմամբ, որ վերոգրյալ կարգավորմամբ դատախազի համար հստակ և կանխատեսելի չէ, թե իր ո՞ր արարքն է, որ կարող է գնահատվել իբրև դատախազության բարձր հեղինակությանն անհարիր կամ դատախազության բարձր հեղինակությունը վարկաբեկող:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած օրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջին, դրանք չեն կարող նախատեսել իրավահարաբերության բոլոր մանրամասները, և կոնկրետ իրավահարաբերության բնույթով պայմանավորված՝ մի շարք հանգամանքներ պետք է իրենց մեկնաբանությունն ստանան հենց դատական քննության ընթացքում: Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշման մեջ արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: (...) օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»: Իր մեկ այլ՝ 2021 թվականի սեպտեմբերի 23-ի ՍԴՈ-1610 որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Որոշակիության սկզբունքի համատեքստում հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ իրավական նորմերը, որպես ընդհանուր-վերացական կարգավորումներ, միշտ որոշակի մեկնաբանությունների կարիք ունեն, և գրեթե անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել հասարակական կյանքի բոլոր բազմաբնույթ հարաբերությունները»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանով սահմանվում են դատախազի վարքագծի ընդհանուր կանոններ, որոնց բոլոր մանրամասները չեն կարող նախատեսվել օրենքով և պետք է իրենց մեկնաբանությունն ստանան դրանց կիրառության ընթացքում: Վերոնշյալից բխում է, որ կարգապահական վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր գործով գնահատում է դատախազի վարքագծում կարգապահական խախտման առկայությունը կամ բացակայությունը, և ըստ այդմ՝ որոշում է կայացնում կարգապահական տույժ նշանակելու հարցի վերաբերյալ:

Վերոգրյալից բխում է, որ դիմողի կողմից ներկայացված հիմնավորումները, որոնց համաձայն՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը բավարար չափով հստակ չէ և չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, անհիմն են, իսկ դիմումի ընդունումը ենթակա է մերժման՝ դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Անդրանիկ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 փետրվարի 2022 թվականի
ՍԴԱՈ-40